



58. ՄԱՐԴԸ ՆԱՄԱՐԴ Ա

Ժամանակով էղել ա մի շատ թամբալ մարդ, անունը՝ Գյուլար: Էս Գյուլարը ոչ աշխատում էր, ոչ էլ մարդամեջ էր էթում, կնգա կողից չէր հեռանում: Կասկածում էր, որ կնիկը բողություն կանի: Խեղճ կնիկն էր աշխատում, էրեխեքին պահում: Ինչքան կնիկը մարդին նախատում էր, որ թամբալ ես, չես աշխատում, էրեխեքը անոթի են, ոտարբորիկ, մարդի վրեն չէր ազդում, կնգա ասածը բանի տեղ չէր գնում, հըլա մե բան էլ նախատում էր՝ էթամ, որ բողություն անես, չեմ էթա:

—Այ մարդ, գնա գոնե մեշից մի շալակ փետ բեր, վառենք, էրեխեքը մրսում են: Վառենք, մե քիչ վոփկ էփենք, էրեխեքը անոթի են, մեղք են:

—էրեխեքը, հա էրեխեքը, բա ես անոթի չեմ, դու ընձի շո՞ւն ես Հաշվում: Քեզի կնիկ ասողի...

—Այ մարդ, բեր էփենք, դու էլ կուտես, հո առանց քեզ չենք ուտի:

—Լա՛վ, որ էղքան զահլա ես տանում, կէթամ:

Գյուլարը վերցուց մեշոքը, թոկը, գնաց մեշեն փետի: Դես-դեն ման էկավ, չոր փետ չըգտավ: Հետն էլ տապոր չէր տարե, որ ճյուղ կտրա: Տեսավ, որ ժամանակն անցնում ա, օրն ավելի ա ցրտում, չոր խոտ-մոտ, տերև հավաքեց, լցեց մեշոքը, թոկով շալակեց, բռնեց տան ճամբան: Դու մի ասա, էս խոտերի մեջ մե օձ էր քնե: Որ տեղը խախտվավ, օձը ցուրտ զգաց, արթնացավ, գլուխը մեշոկից հանեց, տեսավ, որ մե մարդ իրեն շալակե, տանում ա: Մեշոքից դուս էկավ, փաթաթվավ էս մարդի վիզը: Էս մարդի ջանը սրսփաց: Մտքի մեջ կնգան էլ, էրեխեքին էլ, իրանն էլ քֆրեց, որ լսաց կնգան, անիսել-քություն արավ, էկավ մեշեն: Ու մտածում ա, որ կնիկը դաստու հղրկեց, որ օձերը խեղղեն. «Վայ, կնիկ, վայ: Մագար դու էդ տեսակ օձ իր, որ էս օյին բերիր գլոխա, գոնե մարդ իրան մահովը մեռնի, օձի կծելով չըմեռնի»:

Էս էր մտածում, օձն ասավ.—Ա՛յ մարդ, էգուց-էլօր ձմեռ ա, դու հընչի՞ էկար, քունս խանգարիր, տունս քանդիր, հիմի ես ի՞նչ անեմ, Հո՞ւր էթամ: Ես քեզի վնաս չեմ տվե, չեմ խանգարե, արի ինձ տա՛ր իմ տեղը, ծածկա՛, թող գնա՛, թե չէ կըկծեմ, կըմեռնես:

—Օ՛ձ ախպեր, Աստված էլ գիդա, որ ես դաստու չեմ արել էդ բանը, տունը ցուրտ էր, էրեխեքն անոթի են, ասի՛ քիչ փետ-մետ տանեմ, վառենք: Փետ չըգտա, տապոր էլ չունի, էս խոտը հավա-քեցի, որ տանեմ: Խղճա՛ էրեխեքիս, դու էլ էրեխի տեր ես: Իմ մա-հից հետո էրեխեքս սովից ու ցրտից կըմեռնեն: Վերև՝ Աստված, ներքանք՝ դու, վզիցս իջի՛ր, մտի՛ մեշոքը, ես քեզի տանեմ քո տեղը:

—Դու մե՛ քասա վոհիկի համար իմ տունը քանդեցիր, հիմի էլ չես ուզում շինել, դե աղո՛թք արա, «Հայր մեր» ասա, որ բոգիցդ բռնում եմ: Առաջ դու մեռի՛, հետո ես իմ հաշիվը կիմանամ:

—Օ՛ձ, օրենք ու արդարություն կա, քննիչ ու դատաստան կա, թո գործը քննեն, դատեն: Դու քո գլխու իրավունք չունես մարդ սպանել: Եթե դատաստանը որոշի, որ ես օժի կծելով մեռնեմ, էն ժամանակ դահճի դերը դո՛ւ կատարա: Վզիցս իջի, էթանք վկա բերենք, էն ժամանակ, թող հենց էլ վկան էլ դատա:

—Լա՛վ, համաձայն եմ,—ասավ օձը,—մըսում եմ, դի՛ր ծոցդ, մեշու տաքանամ:

—Զէ՛, տաքացար՝ կըկծես:

—Լա՛վ, էսենց էթանք:

—Զէ՛, վզիցս իջի կամ մտի մեշոքը կամ կծկվի մեշոքի վրեն, էթանք:

Օձը կծիկ դարձավ, նստավ մեշոքի վրեն, գացին: Մե քիչ էն յա-նը մե կով էր արածում, գացին կովի մուտը, իրանց բողոքն արեցին:

—Ա՛յ կով, —ասավ Գյուլարը, —մեամիտ խոտ հավաքեցի, հիմի օձը ուզում ա կծի, դա՛տ արա:

—Ա՛յ կով, աշուն ա, ցուրտ ա, էս մարդին էլ վնաս չեմ տվե, հի-մի տունս քանդեր ա, մնացեր եմ անտուն, դա՛տ արա:

Կովը էրկուսին էլ լսաց, մտածեց ու ասավ.

—Օ՛ձ, մարդը նամարդ ա, լավություն ասած բանը չի հասկա-նում: Օրինակ բերեմ իմ վրա: Կաթ եմ տալում, էրեխեքը խմում են, վիզները հաստացնում, էլի լավությունս չեն գնահատում: Էրեզ տերս իմ հորթը աչքիս առաջ մորթեց: Ինձ էլ չեն թողնում, որ իմ մահով մեռնեմ, հետո միս ուտեն, կաշիս հազնեն: Կաթս պակա-սեց թե չէ, մորթում են: Ձեն հանելու իրավունք չունենք: Լավ ժա-մանակն ա, էս մարթին ըըհավատաս, կծա՛, սատկացրո՛ւ, որ իմա-նա՝ ինչ բան ա մահը:

—Լսացի՞ր, —ասավ օձը, —դե «Հայր մերդ» ասա՛, ես Ասու
օրենքով եմ էթում, ձեր օրենքը օրենք չի:

—Զէ՛, —ասավ Գյուլաբը, —քո արածը ինքնաղատաստան ա,
մե վկայով բան դուս չի գա, էթանք էլի վկա գտնենք, գործը թող
դուզն էթա, օրենքով ըլնի:

—Լա՛վ, —ասավ օձը, —քո ասածով ըլնի, էթանք:
Գնացին, պատահավ մե թաք ծառ:

Գյուլաբն ասավ. —Ա՛յ ծառ, դու Ասու ստեղծածն ես, արդար
դա՛տ արա, էս օձը ուզում ա, որ կծա, ընձի սպանա:

—Ի՞նչ ա պատահե, օ՛ձ, ընչի ես սպանում էս մարդուն, քեզ
վնաս տվե՞ր ա:

—Ծա՛ն, էս մարդը մե քասա վոիկ էփելու համար իմ տունը
քանդեր ա, շալակե ու տանում ա, հըմի աշուն ա, ես ցրտից կը-
մեռնեմ, թող ինքը մեռնի, մեղավորն ինքն ա, ես էլ քո թփերի տակ
կապրեմ, տենամ ինչ անեմ:

—Դո՞ւզ ա ասում, ա՛յ մարդ, օձի տունը քանդե՞ր ես:

—Ղաստու չեմ քանդե, մեամիտ արեցի, ծա՛ն: Քո ճղերի սաղա-
ղեն ազատա՛:

—Որ դիմել եք, ես պարտավոր եմ դատ անելու, —ասավ ծա-
ռը, —իմ որոշումն էս ա. մարդը նամարդ ա, չի կարելի հավատ ըն-
ծայել, մենք քեզի պտուղ ենք տալում, գալում մեր հովին նստում
ես, էլի տապորը վերցնում, գալում մեր արմատից կտրում ես: Օձն
արդար ա, ես որոշում եմ, որ օձը քեզ սպանա, մենք էլ, ինքն էլ
ազատվենք, լավ ժամանակն ա: Օ՛ձ, կծա՛ էս նամարդին:

—Մա՛րդ, «Հայր մերդ» ասա, բոլ էլավ:

—Զէ՛, չեմ ասի, գործը օրենքով անենք: Դու որ Աստծուն հա-
վատում ես, Աստված ունես, Աստված իրեքն ա՛ Հայր Աստված,
Որդի Աստված, Հոգի Աստված: Վկաներն էլ իրեքն ա պետք, գնանք
մե վկա էլ գտնենք:

—Լա՛վ, էթանք, —ասավ օձը:

Գնացին, գնացին, պատահավ մե աղվես: Մարդն իրա բողոքն
արավ, օձը՝ իրա:

—Աղվե՛ս, —ասավ մարդը, —թառիս աքլորը վկա, սուտ չեմ
ասում, դաստու չեմ արե:

Աղվեսը, որ աքլորի անունը լսաց, ասավ. —Էսօրվա իմ ուժի-
նը վկա, ես արդար դատ կանեմ, հոգի ունեմ Աստուն տալու: Ես
էրկուսիդ էլ հավատում եմ, հըմա գործը պարզելու համար հար-
կավոր ա մե բան ստուգել, հետո վճիռ հանել, որ գործը իրա շարով
էթա, օրենքի խախտում չըկատարենք: Ճիշտ ա, ես աղվես եմ, հը-
մա աղվեսային օրենք էլ կա: Էղ օրենքը սուրբ ա: Օ՛ձ, ես տենում

եմ, որ երկարությունը գյազ ու կես ա, մեշոքը մե գյազ էլ չըկա, դու ո՞նց ես տեղավորել էս մեշոքի մեջ, Հավատալս չի գալում:

—Ես կտոտվե, քներ ի, դատավո՞ր աղվես:

—Զեմ Հավատա, մինչև աչքովս չըտենամ: Մտի՛ մեշոքը, ես տենամ, որ արդար դատ անեմ:

Օձը մտավ մեշոքը, աղվեսն ասավ.—Դե կտոտվի՛, տենամ՝ ո՞նց ես կտոտվում:

Օձը կտոտվավ, աղվեսը մարդին աչքով արավ, որ փետը վերցնա: Մարդը փետը վերցրեց:

Աղվեսն ասավ.—Էլ ի՞նչ ես կայնե, մեշոքի բերանը կապա՛, օձի զլոխը ջարդա՛:

Գյուլարը տվեց, տվեց, օձին սպանեց:

Աղվեսն ասավ.—Կյանքդ աղատեցի, ես էլ սոված սպասում եմ, գնա խոստացածդ աքլորը բե՛ր, որ ուժին անեմ, Հանգիստ քնեմ: Թե որ չըբերես, վա՛յ քեզ:

—Բերեմ, բերեմ, աղվե՛ս աղբեր, քո լավության տակից դուս գամ: Գնա նստի՛ այ էն ծառի տակը:

Գյուլարը էկավ ու մտածում ա. «Աղվեսից ազատվելը դժվար ա, մե փորձանք կըբերա զիխիս, մեզ էլ աքլոր չըկա, ի՞նչ անեմ»: Էս մտքի հետ էր, մեկ էլ տեսավ մե որսորդ ա զալում:

Որսորդը հացրեց.—Էղ կողմերում աղվես-մաղվես չըտեսա՞ր:

—Տեսա, որսո՞րդ աղբեր, այ էն ծառի տակ մի աղվես քնուկ ա, էս շակս խանգարեց, որ բռնեմ, գնա սպանա՛: Հրմա չասես, որ ես եմ տեղն ասե, ամոթ ա, մինչև հիմա նամարդ են ասում, սրանից հետո էլ կասեն՝ մատնիչ ա: Մատնիչն էլ լավ բան չի:

Որսորդը գնաց, աղվեսին սպանեց, մորթին հանեց, ջանդակը դեն գցեց ու էկավ: Էս մարդը կայնե, հիշկում էր:

Որ աղվեսի մորթին տեսավ, ասավ.—Փառքդ շատ ըլնի, Աստվա՛ծ, բոլոր փորձանքներից ազատվա: Լավ ա՛ կովին ու ծառին աղվեսի խելք չես տվե, թե չէ գործս վատ կըվերջանար: